

ՀԱՅԱՆՊԱՍՏ ՇԱՐԺՈՒՄԸ ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ  
(1896-1930-ական թվականներ)

ԱՐԾՎԻ ԲԱՆՁԻՆՅԱՆ

Օսմանյան կայսրության լծի տակ կեղեքվող հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ սկանդինավյան պետություններում ուշադրություն են դարձրել տակավին XIX դ. վերջից<sup>1</sup>: Թեև արևմտաեվրոպական մյուս երկրների համեմատ հեռավոր սկանդինավյան երկրները սակավ տեղեկացված են եղել Հայկական հարցի վերաբերյալ, այդուհանդերձ հետաքրքրությունը հայության հանդեպ այստեղ ունեցել է տարբեր դրսևորումներ: Ընդհանրապես սկանդինավյան երկրների և Հայ դատի պատմությունը նախ և առաջ առնչվում է նորվեգացի մեծ հումանիստ, բեռնախույզ Ֆրիտյոֆ Նանսենի դործունեությանը: Մենք չենք անդրադառնալու այդ հարցին, որը հանրաձայն թ. և ուսումնասիրված է հայ պատմագրության մեջ<sup>2</sup>: Սկանդինավյան երկրների՝ արևմտահայության ողբերգությունը ներգրավված լինելն արտահայտվել է նախ, հայության մեջ մի շարք միսիոներուհիների գործունեությամբ, ինչպես նաև 1910-ականների վերջին այդ պետություններում սկսված Հայաստան շարժմամբ՝ ի դեմս Հասարակական գործիչների Հայաստանին ուղղված որոշ ջանքերի և սկանդինավյան լեզուներով եղած բազմաթիվ հրատարակությունների: Սույն հոդվածն առավելապես վերաբերում է ամենամեծ սկանդինավյան պետությանը՝ Շվեդիային, որը, թերևս, առավել ակտիվ է եղել Հայկական հարցում:

Տակավին 1894-ին, համիդյան կոտորածներից անմիջապես հետո, շվեդ հասարակությունը մոտիկից տեղեկացել է հայ ժողովրդին բաժին ընկած այդ ողբերգությունը՝ շնորհիվ ստոկհոլմաբնակ բանասեր Նորայր Բյուզանդացու (1845–1915): Վերջինս այդ հարցի շուրջ մի քանի հոդված է հրատարակել «Աֆթոնբլադեթ»<sup>3</sup> և «Ստոկհոլմս դագբլադ» օրաթերթերում շվեդ հասարակությանը կոչ անելով սատար կանգնել հայ որբերին ու այրիներին, 1896-ին հանդես է եկել հայ ժողովրդի մասին բանախոսություններով. մասնավորապես նույն թվականի հոկտեմբերի 21-ին ֆրանսերեն զեկուցում է կարդացել հայերի զանգվածային ջարդերի վերաբերյալ, որը տպագրվել է շվեդական մամուլում<sup>4</sup>: Բյուզանդացու հայությունը սատար

1 Սկանդինավյան երկրներ ասելով նկատի ունենք Շվեդիան, Դանիան և Նորվեգիան. նույն հասկացությանը պատկանող (թեև աշխարհադրականորեն տարբեր) Իսլանդիայի Հայկական հարցի վերաբերյալ տեղեկություն մեզ չի հանդիպել, իսկ Ֆինլանդիային առնչվող միակ փաստը տե՛ս հետագա շարադրանքում:

2 Մ. Արգոուսյան. Նանսենը և Հայաստանը. Երևան, 1977:

3 N. N. de Byza n c e. Blodblad i Minoere-Asien.– “Aftonbladet,” 14.XI.1894; Om de nyaste blodbadet i Armenien.– “Aftonbladet,” 21.XI.1894; Slutet av en nation.– “Aftonbladet,” 19.XII.1894.

4 Ն. Բյուզանդացու. Նամակներ Վիեննայի Մխիթարյաններին (հրատ. պատր. Մարտիրոս Մինասյան). Բեյրութ, 1992, էջ 65:

րելու կոչին արձագանքել են տասնյակ շվեդներ, որոնք նվիրատվություններ են կատարել Հայ կարոտյալների հիմնադրամին. 1896-ի ապրիլին «Ստոկհոլմս դագբլադ»-ում տպագրվել է նվիրատուների ցանկը<sup>5</sup>: Հայ կարոտյալների օգտին շվեդների հավաքած ընդհանուր գումարը 1891-ի սկզբին կազմել է 5 հազար ֆրանկից ավելի<sup>6</sup>: Հողվածներից ստացած 2000 քրոն հոնորարը Բյուզանդացին ուղարկել է Լոնդոն՝ Ուեսթմինսթերի դքսին՝ Հայ այրիների և որբերի հիմնադրամի համար<sup>7</sup>:

1896-ին Ուեսթմինսթերի շվեդ աստվածաբան քահանա Փեր Փերսոնը (1867–1953) հրատարակել է «Հայերը և նրանց կարիքները» 24 էջանոց դրքուկը, որտեղ վիճակագրական տվյալներ կան Արևմտյան Հայաստանի Հայ բնակչության վերաբերյալ<sup>8</sup>:

1896 թ. սկսած նորվեգական և դանիական մամուլում ևս լույս են տեսել հողվածներ Հայ ժողովրդի մասին (ինչպես, «Լուսաբանություններ Հայկական հարցի վերաբերյալ»-ը<sup>9</sup>): Դանիայում հայության վերաբերյալ առաջին հրատարակություններից են Գ. Գոդեի «Հալածանքները Հայաստանում»<sup>10</sup> և Հ. Լարսենի «Արյան և արցունքի երկրից. ճանապարհորդական նոթեր Հայաստանից»<sup>11</sup> գրքուկները: Վերջին հեղինակը հետագա տարիներին էլ հանդես է եկել հայության վերաբերյալ գրքուկներով<sup>12</sup>:

Օսմանյան կայսրությունում հայության վիճակի և համիդյան կոտորածների մասին շվեդերեն գրքուկով («Հալածանքներ և արյունահեղություն Հայաստանում» վերնադրով) հանդես է եկել Արևելյան Հայաստանում միսիոներական բազմամյա աշխատանք կատարած էրիք Յոն Լարսոնը<sup>13</sup>: Այս գրքուկին հետևել են համանման այլ հրատարակություններ ևս, դրված շվեդերեն կամ թարգմանված<sup>14</sup>: Համիդյան կոտորածների վերաբերյալ վկայություններ է թողել նաև մեկ այլ շվեդ քարոզիչ՝ Ն. Վերները,

5 "Stockholms dagblad", 1.VI.1896.

6 Նպաստներ Շվեդիայից. — «Մուրճ», Թիֆլիս, 1897, N 1, էջ 162:

7 Ռ. Ա. Ղ ա զ ա ղ յ ա ն, Ա. Գ. Տ ե ռ - Ա բ ռ ա հ ա մ յ ա ն, Նորայր Բյուզանդացու անտիպ նամակներից. — «Պատմա-բանասիրական հանդես», 1974, N 3, էջ 239:

8 P. P e h r s s o n. Armenierna och deras nod. Uppsala, 1896. Այս գրքուկի մասին Նորայր Բյուզանդացին 1897-ի հունվարի 16-ին Լևոն Մսերյանցին հղված նամակում գրել է «Ի նպաստ Հայոց հրատարակեցա շվեդերեն brochure մի, Armenierna och deras nod» (սխալմամբ հրատարակվել էր «Armenirsna och d-ras nod». տե՛ս Վ. Վ ա ղ ա ղ ա ն յ ա ն, Նորայր Բյուզանդացու նամակները. — «Լրաբեր Հասարակական գիտությունների», 1980, №3, էջ 100): Հավանաբար Բյուզանդացին եղել է գրքուկի հովանավորը, քանի որ որպես հեղինակ նշվում է միայն Փերսոնի անունը:

9 Ն. Բ յ ու զ ա ն դ ա ց ի. նշվ. աշխ.:

10 G. G o d e t. Forfølgelseme i Armenien. Copenhagen, 1897.

11 H. L a r s e n. Fra Blodets og Tarnes Land. En Reyseberething fra Armenien. København, 1900.

12 H. L a r s e n. Blodets og Taarnes Land i Europa: En Orientrejse. Aarhus, [1922]; blandt Røvere: Armenierne paa Apostelen Paulus' Vege: en Orientrejse. [1925]; Et Folk i Nød: Tiæk af Armeniernes Trængsler. Herning, 1934; Falden

13 J. L a r s s o n. Forføljelseme och blodbadet i Armenien. Helsingborg, 1897.

14 Թարգմանական գրքուկներից տե՛ս Det doende Armenien. Örebro, 1897. M. och O. Din broders blod: en berättelse om de Kristnas lidanden i Armenien, Stockholm, 1902; E. F r a n k e. Hagob och hans små vänner: berättelse från Armenien, 1909, Stockholm; G. H a w k i n s. Turkarnas skrackvalde i Armenien. Fruktansvarda ankla gelsor av den amerikanska kommissionen, Stockholm, 1915.

չվեղական միսիոներական կազմակերպությանը հղած թղթակցության մեջ<sup>15</sup>: «Նուրգիսքա օրեթուրիլիութեք» մատենաշարով լույս է տեսել Մարիա Անհուլմի «Մահապարտ ժողովրդի ասքը»<sup>16</sup>: Հեղինակը երկու անգամ եղել է Արևելյան Հայաստանում, այցելել դպրոցներ և եկեղեցիներ: Այս և ուրիշ դրքույկների շնորհիվ չվեղները քաջատեղյակ են դարձել Հայ ժողովրդի կրած փորձություններին: Ինչպես վկայել է 1912-ին Ստոկհոլմի օլիմպիական իսպանացի մասնակցած պոլսահայ մարզիկ Վահրամ Փափագյանը, «Շվետացիներու կողմե հայերուս հանդեպ ցույց տված ջերմ վերաբերմունքը մեզի գարմանք կը պատճառեր: Ուր կ'երթայինք, «գուք հերոս, ազնվական ազդ մըն եք, հաճախ մենք ալ մասնակից եղած ենք ձեր տառապանքներուն», կը կրկնեին»<sup>17</sup>:

1907-ին Հելսինկիի կենտրոնական ամսագրերից «Վալվոյայում» արևելահայ դրական դործիչ Մինաս Բերբերյանի նախաձեռնությամբ լույս է տեսել «Պատկերներ Հայաստանից» նյութը: Լուսանկարներով և քարտեզներով պատկերազարդված այդ ընդարձակ հոդվածի առաջին մասը ներկայացրել է Հայության վիճակը, արևմտահայության կոտորածներն ականատեսների վկայություններով, Հայկական Հարցը<sup>18</sup>: Սա սույն թեմային առնչվող մեզ հայտնի ֆիններեն միակ հոդվածն է:

Սկանդինավյաններից առաջինը հայ գաղթականներին օգնության ձեռք են մեկնել ավետարանչական քարոզիչները: Պարսկաստանում գործած չվեղ միսիոներ Նիլս Ֆրեդրիք Հոյեբը (1857–1925) մեծապես օգնել է Օսմանյան կայսրությունից փախած և Իրանում ապաստանած հայ գաղթականներին: Նրան օժանդակել է դերմանացի քահանա Հանս Ֆիշերը: Ի դեպ, Հոյեբին տարբեր անձինք (ընդամին չվեղական Քարոզչական կազմակերպությունը) քննադատել են իր ուշադրության մեծ մասը հայ գաղթականների վրա բեռնելու համար: Նկատենք, որ չվեղ քարոզիչը եղել է ոչ թե «հոգու որսորդ», այլ մարդասեր և ավելին՝ ազատագրական պայքարի ջատագով: Նա նպատակ է ունեցել կազմել հայերի, քրդերի և աղգային այլ փոքրամասնությունների ճակատ՝ ընդդեմ Օսմանյան կայսրության. այդ առթիվ Կ.Պոլսում հանդիպել է Հակոբ անունով մի հայ հեղափոխականի և մի քուրդ շեյխի: Հոյեբի մասին վկայել են, որ նա «ուր էլ որ դնում էր, հանդիպում էր հայերի, քրդերի կամ այլ ազգության մարդկանց, կոչ անում նրանց ապստամբել իրենց օրինական իշխանությունների դեմ և ազգային անկախություն ձեռք բերել: Այդ պարագայում նա խոստանում էր օգնության հասնել նրանց»<sup>19</sup>:

Մեծ է հատկապես արևմտահայ կարոտյալների շրջանակներում գործունեություն ծավալած սկանդինավյան միսիոներուհիների ավանդը: Արձակագիր Կարպիս Աուրենյանը 1983-ին Կոպենհագենում գրողների միջազգային հանգիստման ժամանակ կարդացած զեկույցում, հիշելով սկան-

15 N. W e r n e r. Blodbaden i Armenien och de svenska missionsvanerna – “Missionsförbundet”, 15.02.1898, s. 56.

16 M. A n h o l m. Det dodsdomda folkets saga. Stockholm, 1906.

17 Վ. Փ ա փ ա ղ յ ա ն. Սեր, սեր, սեր. Պելրութ, 1962, էջ 59:

18 M. B e r b e r i a n. Kuvauksia Armeniasta.– “Valvoja,” Helsinki, 1907, p. 77-94.

19 J. H u l t v a l l. Mission och vision i Orienten. Stockholm, 1991, s. 150.

դինավցի միսիոներուհիների աշխատանքը հայոց մեջ, նրանց տվել է հետևյալ դիպուկ բնորոշումը. «Նեղմիտ միսիոներներ չէին այդ բարեպաշտ կանայք, լայնախոհ, լայնասիրտ և գործնական մարդասիրությունն էր մղում նրանց: Սովորեցին հայոց լեզուն, հարագատացան հայ մարդկանց ու նրանց կենցաղին, նրանց ճակատագրին, հաղթահարելով բոլոր դժվարությունները»<sup>20</sup>: Միսիոներուհիների լայնախոհության ապացույցներից է այն, որ նրանցից ոմանք ընդունել են հայ լուսավորչականություն (ինչպես՝ Քարեն Եփեֆեն), իրենց հաստատություններում հավասարապես տեղ տվել ավետարանչական և լուսավորչական քահանաների:

1895-ին Ստոկհոլմում Ֆրեդրիկա Համմարը և կոմսուհի Զիգրիդ Քուրթը հիմնել են Շվեդ կանանց քարոզչական ընկերությունը: Համիդյան կոտորածների տարիներին նրանք կազմակերպել են բանախոսություններ՝ շվեդ հասարակությանը տեղյակ պահելով հայերին հասած փորձությունների մասին: Նրանք 1900-ին հիմնել են նաև Դանիայի տիկնանց միությունը, որը հայրենակցուհիներին կոչ է արել գորավիդ լինել իրենց հայ քույրերին: Այս միությունը սատար է կանգնել ինքնագրի, Մարաշի, Վանի և Մուշի գերմանական որբանոցներին: Սվեդի ուշ, Շվեդ կանանց քարոզչական ընկերությունը գերմանական և գանիական միությունների հետ մեծապես օգնել է Հունաստան տարագրված հայ դաղթականներին:

Դանիայի տիկնանց միությունն առաջինը հայության մեջ աշխատելու է ուղարկել քույր Քրիսթա Համմերին: Վերջինս 1901-ին մեկնել է ինքնագրի և Մեզրե, օգնել որբերին, խնամել հիվանդներին, Մեզրեում բացել «Էմմաուս» դանիական որբանոցը, որը մաս է կազմել Գերմանական օգնության միության կենտրոնին: Սովորել է հայերեն: Սակայն Համմերի առաքելությունը կարճ է տևել. հիվանդներից վարակվելով՝ նա մահացել է 1903-ին: Շվեդական քարոզչական ընկերությունը 1901 թ. Քրիսթա Համմերի հետ աշխատելու նպատակով Մուշ և Մեզրե է ուղարկել Ալմա Յուհանսոնին (1880–1974), որտեղ վերջինս մնացել է մինչև 1915 թ. դեկտեմբերը<sup>21</sup>: Այս առաքիլի և անձնուրաց, հայերենին քաջագիտակ շվեդուհին աշխատել է Մեզրեում և Մուշում գործող գերմանական միսիոներական հաստատությունում և որբանոցում: 1915-ի վերջին նա վերադարձել է Շվեդիա, սակայն 1920-ին դանիացի տիկին Գրյունհագենի հետ մեկնել է Կոստանդնուպոլիս՝ Սկյուտարում և Մաքրիգյուղում օգնություն ցույց տալով հայ որբերին (մինչև 1922-ը), իսկ 1923–1941 թթ. աշխատել է Սալոնիկի (Հունաստան) շվեդական նպաստամատույց հաստատությունում: Սալոնիկում Յուհանսոնը բացել է մանուֆակտուրա՝ 200-ից ավելի հայ կնոջ ապահովելով աշխատանքով և եկամտով, իսկ ինքնաբերական (Հունաստան) հայկական մանկապարտեզ է հիմնել: 1941-ին Ալմա Յուհանսոնը վերադարձել է Շվեդիա, սակայն կապ է պահպանել իր հայ բարեկամների հետ, որոնք նրան նամակներ են ուղարկել՝ «Սիրելի մայրիկ» բառերով: Գրել է երկու գրքույկ՝ «Մի աքսորյալ ժողովուրդ» և «Հայ աքսորականներ»:

20 Կ. Ս ու լ ե ն յ ա ն. Հին պատմություն. Երևան, 1999, էջ 167:

21 Լ. Ա գ ա տ յ ա ն. Հայ որբերը Մեծ եղեռնի. Լոս Անջելես, 1995, էջ 201-202:

րի կյանքը»<sup>22</sup>: Դրանք 1979-ին ստոկհոլմաբնակ Պետրոս Զարդարյանը թարգմանել է հայերեն և հրատարակել նախ Փարիզի «Աշխարհ» պարբերականում, ապա առանձին գրքուկով՝ Փրանսաբնակ պատմաբան Արթուր Բեյլերյանի առաջաբանով<sup>23</sup>: Արդեն 1920-ին դանիուհի Ամալյա Լանգեն Յուհանսոնի մարդասիրական գործունեությունից մասին գրել է իր «Արյուն հայոց պատմությունից» գրքուկում<sup>24</sup>: Ալմա Յուհանսոնի հիշատակը մինչ օրս վառ է հայերի մեջ<sup>25</sup>:

Մեզրեի հիվանդանոցում աշխատել է նաև մեկ այլ շվեդուհի՝ Քարեն Մարիա Փեդերսենը, որն իր նամակներում բազմաթիվ սարսափներ է նկարագրել հայոց ցեղասպանությունից: Հայուհի Վերգինեի ճակատագիրը պատկերված է Ստոկհոլմում Փեդերսենի հրատարակած գրքուկում<sup>26</sup>, որը լույս է տեսել նաև գերմաներեն:

Սկանդինավյի միսիոներուհիներից իր բացառիկ գործունեությամբ առանձնանում է Քարեն Եփիեն, որի անունը, հայտնի լինելով հատկապես Մերձավոր Արևելքի հայ սփյուռքում, ցավոք քիչ է ծանոթ Հայաստանում: Այս մեծ մարդասեր դանիուհին ծնվել է 1876-ի հուլիսին, Լյուսեբրգ քաղաքում, ուսուցչի ընտանիքում: Նրա հայրը ցանկացել է դստերը բժիշկ տեսնել, սակայն Քարենը 1902-ին դասախոսություն լսելով հայոց կոտորածների մասին՝ վճռել է մեկնել աշխատելու նրանց մեջ: Ծնողները համաձայն չէին՝ Քարենի առողջության սլատճառով: Աղջիկը դիշերները չի քնել, որոշել է ամեն դեպի մեկնել հայերի մոտ: Մեկ տարի է տևել, մինչև որ Եփիեի ծնողները տվել են իրենց համաձայնությունը: 23-ամյա Քարենը 1903-ին դարձել է Գերմանիայի Արևելյան միսիոներական ընկերության անդամ, որի նախագահն էր հայ ժողովրդի մեծ բարեկամ Յուհանսոն Լեփսիուսը: Վերջինս էլ Քարենին առաջարկել է աշխատանքի անցնել Ուրֆայում: Այնտեղ օրիորդ Եփիեն ստանձնել է 1897-ին Գերմանիայի Արևելյան միսիոներական ընկերության հիմնած 250 որբ ունեցող որբանոցի տնօրինությունը: Կրոնական և դավանական նախապաշարմունքներից

22 A. J o h a n s s o n. Ett folk i landsflykt. Ett år ur Armeniernas historia. Stockholm, 1930; Armenisk flyktingsliv. Stockholm, 1931.

23 Վերահրատարակվել է Ուփսալայի «Հյուսիսսափայլ» տարբերքում (Ալմա Յուհանսոն. Աքսորյալ ժողովուրդ մը, թարգմանեց Պետրոս Զարդարյան. «Հյուսիսսափայլ» տարբերք, Ուփսալա, հրատարակիչներ՝ Պետրոս Աբալյան, Գասպար Մինաբյան, 1995, Բ տարի, էջ 170-190): Զարդարյանի թարգմանությունից Անահիտ Տեր-Մինասյանը հատվածներ է թարգմանել Փրանսերեն՝ ընդգրկելով իր «Մուշը 1915-ին ըստ Ալմա Յուհանսոնի» հոգվածում (տե՛ս A. T e r - M i n a s s i a n. Mouch 1915 selon Alma Johansson. «Հայկազյան հայագիտական հանդես», ԺԵ, Բեյրութ, 1995, էջ 57-83): Յուհանսոնի վկայությունները հայոց ցեղասպանության մասին, կատարված 1915 թ. նոյեմբերի 20-ին, լույս են տեսել նաև ռուսերեն թարգմանությամբ (տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913 – 1919), материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Сборник. Составитель, ответ. редактор, автор предисловия, введения и примечаний Вардгес Микаелян. Ереван, 1995, с. 255 – 262): Լուս Անջելիսում 2000-ին լույս է տեսել «Ալմա Յուհանսոն, Մուշ – 1915 (օրագիր)» գիրքը:

24 A. L a n g e. Ett blad ur Armeniens historia. Stockholm, 1920, s. 31-34.

25 Ստոկհոլմի գերեզմանատներից մեկում գտնվող նրա չիրիմը շվեդաբնակ Հայկ Արամյանի հոգածո ուղարկության կենտրոնում է: Երևանում 1997-ի մայիսի 15-ին «Հաստան-Շվեգիա» միությունը կազմակերպել է Յուհանսոնին նվիրված ցերեկույթ:

26 K. M. P e d e r s e n. Digin Virginie: en armenisk kvinnas lidanden. Stockholm, 1920

ղերծ Քարեն Եփփեն ընդունել է հայ լուսավորչական հավատ և կատարելապես ուսանել հայոց լեզուն: Ուրֆայի շրջակայքում նա ամառանոցներ է հիմնել, ցորեն և խաղող աճեցրել, կազմակերպել արհեստանոցներ հայ ալրիների համար: Մի հարուստ դանիացի նրան օժանդակել է նյութապես տարեկան 200 ոսկի նվիրելով: Եփփեն մարդկանց հետ շփվելիս եղել է շատ ճկուն և գործնական: Երբ 1915-ին աքսորված գեթնոցիները եկել են Ուրֆա, Քարենը նրանց բժշկական օգնություն է ցույց տվել, 50 հայի ապաստանել իր տանը՝ վտանգելով սեփական կյանքը: Այս մասին հիշված է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպում. «Ուրֆայում չէ՞ր Քարեն Եփփեն, որն իր տանը փախստականների էր ապաստանել. ձեռքերը տարածած կանգնել դռան շեմքին, դափթիեների դեմ, մինչև սրանք հեռացել էին, քանի որ չէին հանդգնել սպանել դանիացի կնոջը»<sup>27</sup>:

Քարեն Եփփեն 1917-ին վերադարձել է Դանիա՝ առողջական վիճակը բարելավելու, իսկ 1920-ին՝ հաստատվել Հալեպում: Բազմաթիվ թղթակցություններով նա կապ է հաստատել եվրոպական և միջազգային կազմակերպությունների հետ՝ ապահովելու համար հայ գաղթականներին հատկացվող նյութական աջակցությունը: Այդպես ծնունդ է առել «Հայերի դանիացի բարեկամներ» (De Danske Armeniervenner) կազմակերպությունը, որ 1927–1936 թթ. հրատարակել է «Արմենիերվեններ» («Հայերի բարեկամներ») պարբերականը:

1920-ին, երբ Ֆրանսիան հայաթափ է արել Կիլիկիան, 20 հազար հայ գաղթել է Սիրիա: Եփփեն կանանց հավաքել է և նրանց համար հնարավորություններ ստեղծել ձեռագործով ապրուստ վաստակելու: Երբ ժնկում 1921-ին Ազգերի լիգայի առաջին ժողովում հատուկ հանձնախումբ է ստեղծվել առևանգված հայ կանանց և որբերին աղատելու նպատակով, դանիոհի օրիորդ Համմերի առաջարկով նրա լիազոր կոմիսար նշանակվել է Քարեն Եփփեն: Արա շնորհիվ Եփփեն ունեցել է գործելու ազատություն, ձեռք բերել նյութական մեծ միջոցներ և մինչև անգամ քաղաքական կշիռ, որ ամբողջապես օգտագործել է ի նպաստ Սիրիայում ապաստանած հայություն: Եփփենի լիազոր կոմիսարի պաշտոնում նշանակվելու առաջին երեք ամսում հանձնախմբին հաջողվել է հարյուր հայ կին և աղջիկ աղատել մահամեղան գերությունից: Եփփեն 1923-ի սեպտեմբերին Իրյուսելի համալսարանում բանախոսել է «Քրիստոնյա կնոջ դրությունն իսլամ Արևելքում» թեմայով, հայտնելով, որ իրեն հաջողվել է հարեմներից մոտ 400 հայուհու փրկել, ինչպես նաև նշել է, որ սիրիական անապատների վրանաբնակների մոտ և անապատում տակավին հաղարավոր հայ կանայք են մնում<sup>28</sup>: Հետագայում հարեմներից Եփփենի ջանքերով փրկված հայ կանանց թիվը հասել է երկու հազարի: Մահամեղան գերությունից հայուհիներին փրկելու գանիոհի մարդասերի այս առաքելությունն ավարտվել է 1926 թ. դեկտեմբերի 31-ին<sup>29</sup>:

27 Յ . Վ եր ֆ ե լ . Մուսա լեռան քառասուն օրը. Երևան, 1987, էջ 401:

28 «Ապագա», Փարիզ, 6.10.1923:

29 Duguét (medecin principal). La situation des refugies au Liban et en Syrie.– “Revue des études arménien”, T. VIII, 1928, p. 54.

Քարեն Եփիեի միջամտությամբ «Հայերի դանիացի բարեկամներ» ընկերությունը և Յոհաննես Լեփսիոսի միսիոներական ընկերությունը որդեգրել են յուրաքանչյուրը 300 հայ որբի: Այդ դպրոցի հիման վրա ստեղծվել է Հալեպի Սահակյան վարժարանը: Եփիեն մեծապես օժանդակել է նաև այդ վարժարանին կից Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինությունը (1927-1933), հաստատել Ազգերի լիդայի Հայ օգնության միությունը Հալեպում:

Սրանից բացի, Եփիեի ջանքերով 1134 հոգի գտել են իրենց ազգականներին: 342 հոգու արհեստ է սովորեցրել, 66 երեխա հանձնել որբանոց: Բազում որբեայրիներ աշխատանք են գտել ասեղնագործության աշխատանոցում (գործել է մինչև 1947-ը), նրանց գործած ժայռակները Եփիեն վաճառքի է հանել Եվրոպայում: Ձեռք է մեկնել նաև սիրիական հյուղավանների հայ բնակիչներին, իրրբեթ էլ Ռեզ գյուղում բացել հայկական որբանոց, որ ղեկավարել է Եփիեի օգնականուհին՝ դանիուհի Ենի Ենսենը: Քարեն Եփիեն հայ գաղթականների մասին հոգևածներով աշխատակցել է եվրոպական մամուլին<sup>30</sup>, ինչպես նաև հրատարակել երեք դրքուկ. չվեդերեն՝ «Եփրատի հովտի հայադադուլը» և գերմաներեն՝ «Փրկված մահմեդականությունից» և «Նոր հայեր Աբրահամի երկրում»<sup>31</sup>: Քարեն Եփիեն իրեն անվանել է «ազգասեր հայ մը»: Պարզևատրվել է ֆրանսիական «Պատվո լեգեոնի» առաջին կարգի շքանշանով:

Քարեն Եփիեի մասին արդեն իսկ նրա կենդանության օրոք առանձին գրքուկներով հանդես եկան անգլիացի Ափաուր Հեբեն (1924) և դանիացիներ Մարիա Սիքն ու Սվենգ Սեդերգրին Բեքը<sup>32</sup>: Մեր օրերում Եփիեի վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ հանդես է եկել Հակոբ Չոլաքյանը<sup>33</sup>: 1928-ին Հալեպում տեղի հայ թեմի առաջնորդ Արտավազդ վարդապետ Գալենտերյանի նախաձեռնությամբ նշվել է Եփիեի 25-ամյա գործունեությունը: Քարեն Եփիեն մահացել է 1935-ի հուլիսի 7-ին և հայկական ծեսով թաղվել Հալեպի Շեյխ Մաքսուդի հայկական գերեզմանատանը, որտեղ մինչ օրս կանգուն է նրա շիրիմը՝ հայերեն և դանիերեն արձանագրություններով:

Հալեպում Քարեն Եփիեի հիմնած այրիանոցի տարածքը 1947-ին «Հայերի դանիացի բարեկամներ» ընկերությունը փոխանցել է Բերիո թեմի աղապյին առաջնորդարանին. վերջինս այդ կալվածքը հատկացրել է նորա-

30 K. J e p p e. Kranken und Armenfürsorge im armenischen Flüchtlingslager von Aleppo – “Mitteilungen über Armenien.” Bale, 1931, № 52.

31 K. J e p p e. Erlost von Mohammedanismus. Potsdam, 1926; Den armeniska Kolonisationen i Euftrat-trakten. Stockholm, 1930; Neu-Armenier in Abrahamsland. Potsdam, 1930.

32 M. S i c k. Karen Jeppe. Stutgard, 1929; C h r. W i n t h e r. Armenien og Karen Jeppe [Copenhagen,] 1936; S. C. B e c h. Hos et folk uden land: Karen Jeppe – Armeniernes ven (տես վերջինի հայերեն թարգմանությունը՝ «Մի աներկիր ժողովրդի մոտ. Քարեն Եփիեի հայերի բարեկամ», գանիերենից թարգմանեց Հասմիկ Գ. Կյուրեղյանը, Վանաձոր, 2000): Եփիեի սանուհիներից Աննա Դարձյանը (Բարսումյան) հետագայում երևանում 1958 թ. գրել է «Հուշեր որբանոցիական իմ կյանքից» չափածո ստեղծագործությունը, որը նվիրել է «Խնամակալուհու և ողջ ազգիս դաժան օրերի մեծ բարերար Քարեն Եփիեի անմահ հիշատակին» (պոեմը լույս է տեսել 30 էջանոց գրքուկով, Հալեպի «Ոսկետառ» տպարանում, առանց հրատարակության թվականի):

33 Լ. Չ ո լ ա ք յ ա ն. Քարեն Եփիեի հայ գողգոթային և վերածնունդին հետ. Հալեպ, 2001:

բաց մի դպրոցի, որը հետագայում պիտի կոչվեր «Քարեն Եփփե ազգային ճեմարան»:

Մարիա Յակոբսենը (1882–1960) մեկ այլ հայանվեր դանիուհի էր: Նա 1907-1919 թթ. ապրել և աշխատել է Խարբերդում, որտեղ որբանոց է բացել, կարողացածի չափ փրկել և օգնություն ցույց տվել հայ մանուկների ու կանանց, ականատես եղել հայոց եղեռնի սարսափներին, որոնք արտացոլել է պատմական մեծ արժեք ներկայացնող իր օրագրում<sup>34</sup>: 1922-ին հաստատվել է Լիբանանում և մինչև կյանքի վերջն ապրել Բիբլոսում: Այստեղ Յակոբսենը որբացած հայ մանուկներին հավաքել է մի հարկի տակ, այն անվանելով ոչ թե որբանոց, այլ «Թուչնոց բույն»: Հաստատությունն ունեցել է դպրոցի կարգավիճակ, որն առաջնորդվել է Բեյրութի տարրական գալրոցների ծրագրով: Աշակերտները եղել են մեծ մասամբ աղջիկներ<sup>35</sup>: «Թուչնոց բույնի» խնամակալն են դարձել Դանիայի Եկեղեցասեր տիկնանց միությունը և լիբանանահայ գաղութը: Որբերը նրան սիրով «մամա Յակոբսեն» են անվանել: Մահից հետո նրան փոխարինել է քույրը՝ Աննա Յակոբսենը<sup>36</sup>:

Ի դեպ, Լոնդոնում 2001-ին Մարիա Յակոբսենի օրագրության վերահրատարակման կապակցությամբ բացվել է գանիական միսիոներական արխիվներից քաղված հայությունը վերաբերող լուսանկարների ցուցահանգես, որտեղ ներկայացվել են 1900–1919 թթ. լուսանկարներ՝ Խարբերդից և Մեզրեից:

«Գերմանական Ռազմական Առաքելություն» կազմում 1914-ի հոկտեմբերից մինչև 1915-ի ապրիլը հրգրումում աշխատել է գերմանական Կարմիր խաչի հիվանդապահուհի նորվեգացի օրիորդ Ֆլորա Ա. Ուեդել-Յարլսբարգը, որի վկայությունները հայկական ջարդերի մասին հրատարակել է Նվեյցարիայի Հայաստան կոմիտեն «Որոշ փաստաթղթեր 1915-ին հայերի ճակատագրի մասին, հուլիսի 29, 2002» ("Quelques documents sur le sort des Arméniens en 1915, 29 Juillet, 1915") գրքույկում, Երվանդ Ճյուզեբյանի հայերեն թարգմանությամբ լույս է տեսել արևմտահայ մամուլում, արտատպվել Թիֆլիսի «Մշակում»<sup>37</sup>: Ի դեպ, վերջինում վկայված է, որ Ուեդել-Յարլսբարգի վկայությունները հետագայում մտել են Ռոնե Պինոնի գրքի մեջ. ամենայն հավանականությամբ նկատի է առնված «Հայերի

34 Յակոբսենի օրագրությունը լույս է տեսել դանիերեն և անգլերեն (Թարգմանիչ Քրիսթեն Վինդ, երկու տպագրություններ, երկրորդը 2001-ին «Կոմիտաս» ինստիտուտի հրատարակությամբ (M. J a k o b s e n. Diaries of a Danish Missionary: Harpoot. 1907-1919. Translated by Kristen Vind, edited and with an introduction by Ara Sarafian. Princeton and London, 2001): Յակոբսենի օրագրությունը թարգմանաբար լույս է տեսել նաև արևմտահայերեն (Անթրիս, 1979) և հատվածաբար արևելահայերեն («1915. պատմական օրագրություններից», Երևան, 1995):

35 Հ. Ա. Չ ա դ մ ա գ ճ յ ա ն. Դանիական Թուչնոց բույնը. – «Հայաստանի կոչնակ», 1940, N 34, էջ 838:

36 Սիլվա Կապուտիկյանը 1960-ականների սկզբին այցելելով Լիբանան հանդիպել է «ախորժալուր հայերեն» խոսող Աննա Յակոբսենին («սպիտակամազ, գունատ և ազնիվ դեմքով տարեց» այգ կնոջը, որի հայերեն նամակը «սիրտը սեղմելու չափ սիրելի թվացող տառախալներով» նա պահել է որպես մասունք) և մասնակցել «Թուչնոց բույնի» նախակրթարանում իրեն ի պատիվ տրված աշակերտական հանդեսին (Ս. Կ ա պ ո ս ի - կ յ ա ն. Քարավանները դեռ քայլում են. Երևան, 1964, էջ 214-215):

37 Գերման հիվանդապահուհիները կր պատմեն հայկական ջարդերը. – «Մշակ», 12.01.1917, էջ 1-2:



ճնշումները. գերմանական մեթոդներ, թուրքական աշխատանք» գրքույկը<sup>38</sup>:

Հայերին օժանդակած անձնվեր սկանդինավուհիներից էր նաև նորվեգուհի Բոդիլ Բյորնը: Նա 1906-1916 թթ. աշխատել է Մուշում և Մեզրեում, տիրապետել Հայոց լեզվին: Նա եղել է Մուշի որբանոցի գլխավոր պատասխանատուն<sup>39</sup>: Նրա հետ որբանոցում աշխատել է նաև մեկ այլ նորվեգուհի՝ քույր Քրիսթինեն<sup>40</sup>: Ըստ Մարիա Յակոբսենի օրագրության՝ թուրքական իշխանությունները նրան վտարել են Մեղրեից, Բոդիլը Հայերի փոքր խմբով գնացել է Բիթլիս, որտեղ նրան ստիպել են թողնել Հայերին և հեռանալ<sup>41</sup>:

Բոդիլ Բյորնը փաստորեն եղել է Մուշի կոտորածի միակ վկան: «Նորվեգիացի քույրը Հոն դտնված և տեսած է որ 1915 հուլիս 17-ին Սարբերդեն թնդանոթներ ուղղելով քաղաքի վրա երեք օր թնդանոթով քանդած են ամբողջ Հայկական տուններն ու հաստատությունները: Մեկ կողմեն ալ ջարդը շարունակած է քաղաքին մեջ իսկ. կիներ, մանուկներ, տղաքներ մոտակա դյուղերու ախոռներուն և մարագներուն մէջ հավաքելով ամբողջովին այրած են: Ինք տեսած է որ ոչ մեկ ապստամբական շարժում պատահած է Հայոց կողմե, ընդհակառակը, երբ ինք կառավարիչ Սերվեթի դացած է իր մեկ քանի Հայ պաշտոնյաներու համար, անիկա անդին իր դիտուն վրա կախված պատկեր մը ցույց տալով ըսած է. «...Մակեդոնիո մեկ տեսարանն է այս, Հոն ինչ որ ըրին քրիստոնյաները մեղի, մենք ալ նոյնը պիտի ընենք իրենց»<sup>42</sup>: Կոտորածից հետո քարայրների մեջ թաքնված յոթ մարդու է կերակրել քույր Բոդիլը (հինգ կին, մեկ տղամարդ և մի երեխա), որոնք փրկվել են որպես նրա աշխատողները: Նորվեգուհին գնացել է Սարբերդ, ճանապարհին ականատես լինելով սարսափելի տեսարանների. վերադառնալով Մուշ՝ մնացել է այնտեղ մինչև ուսանողի գալը<sup>43</sup>: Քույր Բոդիլը նորվեգիա է վերադարձել 1918-ին: Չկարողանալով անտարբեր մնալ Հայ ժողովրդի որբերի հանդեպ՝ 1922-ին մեկնել է Կոստանդնուպոլիս և աշխատել տեղի Հայկական որբանոցներից մեկում<sup>44</sup>:

Մեկ այլ շվեդուհի՝ Էլիս Շաուլտտա Սյունդվալը (1853–1921) Հայ գաղթականներին օգնություն է ցույց տվել Արևելյան Հայաստանում և Իրա-

38 R. P i n o n. La Suppression des Armeniens. Methode allemande, travail turc. Paris, 1916.

39 D r . J o h a n n e s L e p s i u s. Deutschland und Armenien. Potsdam, 1919, S. 180–182.

40 Վահան Փափազյանը Քրիսթինենին հիշել է որպես գերմանուհի, իսկ Բոդիլին՝ շվեդուհի, նրա անունն էլ գրել Բոդլեր (Պոզլեր). «Աչքի կ'իյնար նաև Շվետացի շվեստեր (գերմաներեն Schwester քույր - Ա.Բ.) Պոզլեր խելացի, լուրջ և պատրաստված միսիոնարուհի մը, որ անգնահատելի ծառայություն ըրավ Մշո ժողովուրդին» (տես Վ. Փ ա փ ա զ - յ ա ն. Ի մ հուշերից. հ. 2, Բեյրութ, 1952, էջ 347):

41 M. J a k o b s e n. Diaries of a Danish Missionary..., p. 133.

42 «Ժողովրդի ձայնը - Ժամանակ», 4. Պոլիս, 22.1.1922:

43 Նույն տեղում:

44 Հայաստանի պատմության պետական կենտրոնական արխիվում հայտնաբերել ենք Բոդիլ Բյորնի անգլերեն երկու նամակը ուղղված յոնդոնաբնակ հասարակական գործիչ, բանասեր Արչակ Սաֆրաստյանին (ՀՀ ՊԿԱ, ֆ. 412, գ. 980, վավ. 1, 2), որ թարգմանաբար հրատարակել ենք Ուփսալայի «Նոր հորիզոն» ամսագրում (տես Ա. Բ ա խ չ ի ն յ ա ն. Հայասեր նորվեգացի գթություն քույրը. - «Նոր հորիզոն», 2001, N 2, էջ 12-13):

նում: Սկսած 1888-ից, 30 տարի աշխատել է Երևանում, էջմիածնում, Ալեքսանդրապոլում, Արարատյան գաղտի գյուղերում և Ղարաբաղում: Մի քանի անգամ եղել է Թիֆլիսում, Վանում և այլուր: Այս շվեդուհին, որ հիանալի տիրապետել է հայոց լեզվին և հաճախ կրել հայկական հագուստներ, եղել է Շվեդական քարոզչական կազմակերպության Այսրկովկասում գործած վերջին միսիոները: 1915-ին Երևանում և էջմիածնում օգնություն է ցույց տվել Արևմտյան Հայաստանից մազապուրծ փրկվածներին: Աշխատել է նաև Սալմաստի (Իրան) Հաֆթվան հայկական դպրոցի որբանոցում, երբեմն գրելով իր գործունեության մասին շվեդ ավետարանչական մամուլում: Նա եղել է նաև ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույցի ակտիվ աշխատող: Էլին Սյունգվալը վախճանվել ու թաղվել է Երևանում<sup>45</sup>:

Առաջին աշխարհամարտի տարիներին Շվեդիայի տարբեր քաղաքներում տեղի են ունեցել հայուկությանը նվիրված զանազան միջոցառումներ, որոնց մասնակցել են տարբեր մասնագիտությունների տեր անձնավորություններ՝ շվեդ հայադեմոստրատիվալ Լիդենը (1862–1939), Հերբերթ Փեթերսոնը (1881–1927), տիկին Լինդհագենը, պարոնայք Սյուդերբերգը, Յ. Հիրնը, Ֆիլիբերը, լեզվաբան, Լուսնգի համալսարանի հնդկագիտության ուսուցչակազմ էրբե թյունելը (1877–1947), Ստոկհոլմում բնակվող ֆրանսիացի գնդապետ Միշլովը և բարոն դը Վոն<sup>46</sup>: Հատկանշական է, որ հայերի ճակատագրի հանգեպ հետաքրքրություն են ցուցաբերել նաև Շվեդիայի թագավորական ընտանիքի անդամները՝ նորին մեծություն արքայադուստր Ինգեբորգը<sup>47</sup> և արքայազն Գուստավը (հետագայում՝ Գուստավ V թագավոր), որը հայտարարել է, թե միջազգային հանրությունը պետք է սատարի «գեթախտ հայ ժողովրդին»<sup>48</sup>: Շվեդական մամուլը 1914–1920 թթ. Հայաստանին անգրագարձել է ավելի քան 50 անգամ<sup>49</sup>:

Դանիուհի գրող, հայ գրականության թարգմանչուհի Ինդա Նալբանդյանը (ծնյալ Ինգա Հենրիետ Լյուսինդա Քոլլին, 1879–1929) եղել է Դանիայում հայանպաստ շարժման ակտիվիստներից: Աստղագետ Մարտիրոս Նալբանդյանի կինը, որ Առաջին աշխարհամարտի տարիներին բնակվել է Կ.Պոլսում, հայուկության տառապանքները և իր վկայությունները ներկայացրել է 1917-ին տպագրած պատմվածքների ժողովածուներում՝ «Մեծ վիշտը», «Զոհերը» (կամ «Փորձություն կրածները») և «Բաց տարածություն»: Նրա «Գիշերը. պատկերներ հայոց նահատակությունից» գիրքը թարգմանաբար լույս է տեսել շվեդերեն (1917 թ.) և ֆրանսերեն (1918 թ.): Հայկական պատմվածքների մեկ այլ ժողովածու էլ՝ «Եղբորդ արյունն է աղաղակում» վերտառությունը, նույնպես տպագրվել է ֆրանսերեն: Այս

45 Նրա մասին տե՛ս E. J. L a r s s o n. Vid Ararats fot. Stockholm, 1919, s. 135; Svenska missionsförbundet. Yttre missionen. Red. av T. Anderson. Stockholm, 1928, s. 31.

46 P. D e s f e u i l l e s. Le mouvement proarménien en Scandinavie.– “La Voix de l’Arménie,” N 2. 15.1.1918, p. 55.

47 Նույն տեղում:

48 “Social-Demokraten,” Stockholm, 26.III.1917, տե՛ս M. S t i e r n s t e d t. Armeniernas fruktansvärda läge. Stockholm, 1917, S. 136:

49 G. G u n n e r, E. L i n d b e r g, eds. Langtan till Ararat: en bok om Armenien och Armenisk identitet. Gothenburg, 1985, s. 216–226.

հրատարակութունից էլ երեք պատմվածք թարգմանաբար լույս են տեսել հայերեն<sup>50</sup>:

Դանիայում հայանպաստ շարժման ակտիվիստներ են եղել նաև Բոքելյունդը, օրիորդ Մարիա Սիբը, Օդե Մեյեր Բենեդիկտսենը Շառլոտենլյունդից, որը ճանապարհորդել է Հայաստանում և դրել երկու գիրք հայության մասին<sup>51</sup>: Հայերի մեջ աշխատել և հայանպաստ գրքույկներով հանդես են եկել նաև դանիուհիներ Հեդվիգ Անդրեն («Մանկան արցունքներ. մանուկների պատմութուններ Հայաստանից»), Հանսինե Մարչերը («Տառապանքներ մյուս կողմից»), Ենսինե Օրցը («Հայ նահատակներ»)՝ այս գրքույկները տպագրվել են Կոպենհագենում՝ առանց հրատարակման թվականի նշման: Հայ որբերի մասին վերջին գրքույկները եղան Էլզա Վինդի «Հայ երեխաները. ինարբերդից Լիբանան»<sup>52</sup> և Աքսել Գրամի «Հայ գաղթականների մեջ Հունաստանում. հայերի մեջ գործած միսիոներուհի Մարգարեթ Եփսեսի հուշերի հետ միասին»<sup>53</sup>:

Առաջին աշխարհամարտի տարիներին ֆրանսիական բանակի օտարազդիների լեգեոնում է ծառայել նորվեգական բանակի ղեկավար Անգելը, որը հետագայում իր հուշերում հիացմունքով է դրել հայ ռազմիկների մասին<sup>54</sup>: «Հայ ռազմիկը սովորաբար խոշոր է, ամրակազմ, բարեձև, դեմքին՝ լուրջ հայացք: Նրա սև աչքերը գրավում են քո ուշադրութունը: «Դու հա՞յ ես», – հարցրի մեկին: «Այո, իմ լեյտենանտ»: Ես սեղմեցի նրա ձեռքը և ասացի նրան. «Դու ոչ միայն լեգեոնի իմ ընկերն ես, այլև իմ եղբայրը: Ես այս լեգեոնում եմ նաև քո՞ ժողովրդի դատի համար»: Հայ զինվորների մասին բարձր կարծիքի են եղել նաև սպաները. «Գերագանց ռազմիկներ են... Նրանք միայն մեկ թերութուն ունեն՝ շատ հաճախ ոչ անհրաժեշտաբար իրենց նետում են վտանգի մեջ: Սրանով է բացատրվում նրանց հետ կատարվող դժբախտ պատահարների մեծ թիվը: ...Նրանք բարի են, վեհանձն և վստահելի, սակայն մարտի ժամանակ կարծես վիշապներ լինեն: Ես տեսել եմ նրանց հողապատնեշների վրայով թռչելիս և փշալարերի ու հրանոթների դեմ վազելիս: Նրանք շատ համարձակ են»: Այս խոսքի վրա մեկ այլ սպա պատասխանել է. «Դա զարմանալի է: Եթե մենք հիշենք այս ժողովրդին՝ ընկած ճակատագիրը, ի՞նչ արժեք կարող է ունենալ կյանքը նրանց համար: Նրանց ոչինչ չի մնացել՝ անխոհեմութունից և վրեժխնդրության հույսից բացի»: Մի նորվեգացի լեգեոնական էլ ասել է. «Նրանք քաջ են: Ես հիշում եմ դեպքեր, երբ նրանք դրոհել են առջևից և առաջինն են հասել օբյեկտներին, այն դեպքում, երբ շատերը վարանում էին»: Անգելը հիշել է նաև, թե ինչպես մի նորվեգացի ռազմական ռժիզ

50 «Նավասարդ», Ա շրջան, Բ պրակ, Պոեթրեշ, 1923, էջ 40-47:

51 Å. M. B e n e d i c t s e n. Armenien. Et folks liv og kamp gennem to aartusinder. Kobenhavn, 1925; Armenien: en folkeskæbne. Kobenhavn, 1927.

52 H. A n d r a e. Barnatårar. Barnberattelse från Armenien; H. M a r c h e r. Oplevelser derovre fra. Kjøbenhavn; J. Ø r t z. Armeniske martyrer. Kjøbenhavn.

53 E. V i n d. Armeniske børn: Fra Harpoot til Libanon. Copenhagen, 1949.

54 A. G r a m. Blandt armeniske flygtninge i Grækenland: Med erindringer af tidligere Armeniermissionær Margrethe Jepsen. Herning, 1953.

55 C o l o n e l A n g e l l. Armenian soldiers. – “The Armenian Herald,” Boston, 1919, February-March-April, p. 174–177.

Կովկասի ռուսական ռազմաճակատից հետը բերել է մի սարսափելի հիշատակ տանջանքի մի գործիք, որով թուրքերը խոչտանգել են մի հայ բժիշկ մայրի, պատմել, թե ինչպես էին հայ կամավորները բացում էրզրում տանող ճանապարհը ձյան և բքի միջով, որոնց խիզախությունը մեծանում էր այն գիտակցութամբ, որ թուրքերն իրենց պատրաստ են տանջամահ անել. «Խիզախ ժողովուրդը երբեք չի կորցնում հույսը»,-եզրափակել է իր հոդվածը նորվեգացի գինվորականը:

1917 թվականն առանձնահատուկ է եղել Շվեդիայում Հայկական հարցի համար: Ինչպես նշել է չվեգ հեղինակ էրիք Լինդբերգը, «այդ թվականին խաղաղության շարժումն իր գաղաթնակետին էր և ճնշման էր ենթարկվում հայկական քննարկումների ընթացքում: Հայկական հարցը այն շատ հարցերից էր, որ կարող էր կորչել, երբ խաղաղությունը գար:... Միտժամանակ, Հայաստանում կոտորածները շարունակվում էին»<sup>56</sup>: Հայտնի է, որ Շվեդիան չեզոք դիրք է գրավել պատերազմի ժամանակ, սակայն գերմանամետ լինելով հանդերձ՝ որոշ չվեգական շրջանակներ անտարբեր չեն մնացել Գերմանիայի դաշնակից Օսմանյան կայսրությունում կատարված իրադարձությունների հանդեպ: Այդ թվականին Ուփսալայում կայացել է խաղաղության համաժողով, որի ծրագիրն ընդգրկել է 90 կետ՝ մի շարք ազգերի խաղաղության վերաբերյալ: 9-րդ կետը վերաբերել է Հայաստանի խաղաղությանը: Ցավոք, մեզ մանրամասներ հայտնի չեն այս իրողության վերաբերյալ: Նույն 1917 թվականին Ստոկհոլմում բողոքի ցույցեր են կազմակերպվել ի պաշտպանություն և ի համակրանք Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների: 1917-ի մարտի 27-ին կազմակերպված միտինգը նվիրված է եղել Հայաստանին: Նախաձեռնողներն են եղել քաղաքական գործիչ, Ստոկհոլմի քաղաքագլուխ Քարլ Լինդհագենը, սոցիալ-դեմոկրատների առաջնորդ, հետադայում Շվեդիայի վարչապետ Յալմար Բրանթինգը (1860–1925) և բարոնուհի, գրող Մարիթա Շթյերնսթեդլ-Նորգսթրյոմը (1875–1954), «Հայերի սարսափելի վիճակը» (1917 թ.) գրքի հեղինակը: Ներկաների թիվը եղել է մոտ երկու հազար: Բացման խոսքով հանդես է եկել Բրանթինգը, որը խարանել է գերմանական վայրագությունները բոլոր գրավյալ երկրներում, նշավակել Գերմանիայի բարբարոս մեթոդները ծովի և ցամաքի վրա, պատմել Օսմանյան կայսրությունում հայ ազդարնակչության զանգվածային կոտորածների մասին: Նա Հայերի կոտորածը բնութագրել է որպես «կազմակերպված և սիստեմատիկաբար իրագործված ցեղասպանություն» (օգտագործել է folk-mord տերմինը, որ բառացի ցեղասպանություն է նշանակում), մեղադրել չվեգական մամուլին՝ Հայերի եղեռնի վերաբերյալ երկար ժամանակ լռություն պահպանելու համար և նախատինքի խոսք է ուղղել չվեգ կառավարությանը, որը երբեք չի բողոքել այդ բռնությունների դեմ: Բրանթինգը նշել է նաև, որ ինքը 1916-ին բանակցել է Շվեդիայի արտգործնախարար Քնյուսթ Վալենբերգի հետ, հույս ունենալով, որ վերջինս կարող է ազդել դադարեցնելու համար Հայերի ցեղասպանությունը, ինչը սակայն անարդյունք է մնացել: Բրանթինգի ճառը հրատարակվել է «Սուսիալ-դեմոկրատներ» պարբերական

56 G. G u n n e r, E. L i n d b e r g, eds. Նշվ. աշխ., էջ 268:



րանդյանը և Ստեփան Զորյանը (Ռոստոմ), որոնք ներկայացրել են հայերի պահանջներն Օսմանյան կայսրությունից, կոչ արել միջազգային սոցիալ-դեմոկրատների ղեկավարներին ակտիվ լինել հայերի հալածանքները դադարեցնելու և հայկական դրավված տարածքները վերագարձնելու գործում: Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը խոստացել է աջակցել հայկական պահանջներին:<sup>62</sup>

Նույն 1917-ին Շվեդիայում հրատարակվել է հայոց մասին չորս գիրք: Հատկապես արժեքավոր է կոտորածների ականատեսների վկայությունները պարունակող գրքույկը<sup>63</sup>: Նույն ժամանակ տարբեր հեղինակների հայապատում գործերի շվեդերեն թարգմանությունների շնորհիվ Շվեդիան կրկին իրազեկ է դարձել հայկական իրադարձություններին<sup>64</sup>: Հայություն մեջ գործած քարոզիչ Լարս Էրիք Հյոգբերգը (1859–1924) «Պարսկաստանի մահադակասների մեջ» գրքում (1920) մի գլուխ նվիրել է Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում հայերի իրավիճակին, նկարագրել գազթը և ջրազերը Դեր Զոր անապատում, հայ գաղթականների կյանքը Հալեպում<sup>65</sup>:

Անշուշտ, վերոհիշյալ գրքերի գրական արժեքը և մակարդակը հավասարաբեկ չէ, սակայն դրանք բոլորն էլ կարևոր առաքելություն են ունեցել՝ սկանդինավյան ընթերցողին ճշմարտությունը ներկայացնել հայոց եղենի վերաբերյալ:

1920-ին երեք մեծ կայսրություն՝ Ռուսաստանը, Ավստրո-Հունգարիան և Օսմանյան կայսրությունն արդեն կազմալուծված են եղել: Վերջինից առանձնացել են Սիրիան, Պաղեստինը, Իրաքը և Հայաստանը: Հայտնի է, որ Արևելյան Հայաստանի մի մասում անկախություն է հռչակվել և Թուրքիան ճանաչել էր այն, սակայն հետագայում, 1923-ի Լոզանի կոնֆերանսում չեղյալ է հայտարարել: Շուտով եվրոպական ուժերը այսպես կոչված մանդատավոր են դարձել անջատված երկրների համար (Ֆրանսիան՝ Իրաքի, Մեծ Բրիտանիան՝ մնացած տարածքների համար): Ժնևի կոնֆերանսի ժամանակ Ազգերի միջազգային հանձնախումբը կոչ է արել սկանդինավյան երկրներին վերցնել Հայաստանի մանդատը: Այս առթիվ շվեդ հասարակական գործիչ Նաթանայել Բեսքոլը գրել է. «Մենք՝ սկանդինավյան ժողովուրդներս ունեցել ենք և ունենք այն առավելությունները, որ տարբեր ձևերով կարողանանք օգնել պատերազմի զրկանքներից տուժածներին: Ոչ ոք չի ցանկանում մանդատավոր լինել Հայաստանի համար, քանի որ, ինչպես ասվել է, «այնտեղ չկա նավթ, այնտեղ միայն հայեր կան»: Եվ այստեղ մենք, Սկանդինավիայի ժողովուրդներս մի պարտականություն ունենք, որ մեզ է սպասում: Միջազգային համաժողովը ժնևում Հայաստանի համար մանդատավոր գտնելու համար հատկապես դիմեց սկանդինավյան երկրներին: Դա մեծ պատիվ է մեզ համար... Մենք առանձնա-

62 G. Gunnar, E. Lindberg. Նշվ. աշխ.:

63 G. Hawkins. De armeniska fasorna. Ögonvittnens ovedersagliga berättelser. Stockholm, 1917.

64 A. J. Toynebe. Turkiska grymheter mot underkuvande folk. Stockholm, 1917. I. Nalbandian. In i natten: Bilder från Armeniens undergång. Stockholm, 1917. M. Pirajan. Blod och tårar. Armeniernas lidanden i Turkiet. Stockholm, 1918.

65 L. E. Högberg. Bland Persiens muhammedaner. Stockholm, 1920, s. 223–251.

չնորհ ենք ստացել մեծ մասշտաբով օգնելու համար մի տառապյալ ժողովրդի պատերազմի գոհերին»<sup>66</sup>:

1920–1921 թթ. Շվեդիայի խորհրդարանում քննարկումներ են տեղի ունեցել նորանկախ Հայաստանի հանրապետությանը ցուցաբերվելիք օգնության հնարավորության վերաբերյալ: Շվեդիայի և Նորվեգիայի կառավարությունները հայտնել են, որ Հայաստանին պատրաստ են տրամադրել դյուղատնտեսական մեքենաներ և դյուղատնտեսական կենդանիներ (խոզեր և եզներ)<sup>67</sup>: Որոշ պատգամավորներ պնդել են, որ Շվեդիան պետք է վերցնի Հայաստանի մանգատը: Սակայն չվեզական կառավարությունը հետաքրքրված չէր հարցի նմանօրինակ լուծմամբ: Նրա պետական շահերը ևս թելադրել են Թուրքիայի հետ հարաբերությունները չվատացնելու համար մանգատ չտալ Հայաստանին: Օսմանյան կայսրությունում Շվեդիայի դեսպան Գուստաֆ Օսքար Վալենբերգն արշավ է սկսել հայերին աջակցելու չվեզական ծրագրի դեմ: 1920-ի ապրիլի 26-ին նա նամակ է հղել Արտաքին գործերի չվեզական բաժանմունքին՝ առաջարկելով չվերցնել Հայաստանի մանգատը<sup>68</sup>: Շվեդ պատմաբան Հրիք Լինդբերգը Վալենբերգի վերաբերմունքը բացատրել է տնտեսական շարժառիթներով: Ըստ նրա, չվեզ քաղաքական գործիչը չի ցանկացել վնասել Շվեդիայի և Օսմանյան կայսրության միջև եղած բարեկամական հարաբերություններին, քանի որ Թուրքիան տնտեսապես կարևոր էր Շվեդիայի համար<sup>69</sup>:

1921-ի փետրվարի 9-ից 12-ը սկանդինավյան չորս երկրների ներկայացուցիչները հանդիպել են Ստոկհոլմում քննարկելու հայ ժողովրդին աջակցելու խնդիրը: Հանձնախմբի չորս մասնաճյուղ է ստեղծվել յուրաքանչյուր երկրում: Որոշում է ընդունվել գործունեության երկու ուղի որդեգրել: Առաջին. ազդել սկանդինավյան քաղաքական ոլորտների վրա մանդատավոր դառնալու Հայաստանի համար, երկրորդ՝ փրկել հայ կանանց և երեխաներին մահմեդական գերությունից: Հայկական հարցը քննարկման խնդիր է եղել նաև 1922-ի ամռանը Սոննթադբերգում Քրիստոնեական միավորումը շարժման հանդիպման ժամանակ, որի ընթացքում Շվեդիան առաջարկել է Հայկական հարցի մասին հատուկ գրությունը դիմել Ազգերի Լիգային: Սույն գրության մեջ ներկայացվել է Հայկական հարցի պատմությունը՝ 1878-ի Բեռլինի համաժողովից մինչև 1921 թ., առաջ են քաշվել հետագա գործունեության ծրագրեր՝ մասնավորապես կապված հայ գաղութի ստեղծման հետ: Սույն գրությունը ստորագրել են Նաթանայել Բեսքովը, Քրիստոնեական շարժման խորհրդի նախագահ Հենրի Հոլբերնը և գլխավոր քարտուղար Օլիվեր Դրայերը<sup>70</sup>:

Վերոհիշյալ չորս մասնաճյուղերից հատկապես ակտիվ է եղել «Հայաստանի չվեզական հանձնախումբը», որի անդամներ են ընտրվել աստվա-

66 N. B e s k o w. Ett martyrfolk i det tjugonde arhundradet. Stockholm, 1921, s. 11.

67 Աջակցության խոստումներ. – «Ճակատամարտ», 17.07.1920, էջ 2:

68 Նամակի շարադրանքը տե՛ս G. G u n n e r, E. L i n d b e r g, նշվ. աշխ., էջ 270-271:

69 Այս մասին մանրամասն տե՛ս Հրիք Լինդբերգի «Շվեդիայի հայկական քաղաքականությունը» հոդվածում (նախորդ հղումը, էջ 264-276):

70 Skrivelse i armeniska fragan till Nationernas frbund. – “Meddelanden från forbundet for Kristet Samhällsliv.” Stockholm, 1922, № 8-9, s. 2-4.

ծաբան Նաթանայել Բեսքովը (*Դյուրսհոլմ*), ուսուցիչ Դագնի Թորնվալը. պաստոր Սամուել Թիսելը (*Ստոկհոլմ*), Մեֆոդիի աստվածաբանական դպրոցի ռեկտոր Յունաթան Յուլենը (*Ուփսալա*), եկեղեցական շաքարոդ Իսբերգը (*Մալմյո*), եկեղեցու պատմաբան Յալմար Հոլմբլիսթը (*Լոունդ*) և Յոն Վաքսթրյոմը (*Նուրբի*): Նրանք «Փրկել Հայաստանը» վերտառութ-յամբ հոգևածով կոչ են արել շվեդ ժողովրդին օգնել Հայ գաղթականներին. «Շվեդական Հանձնախումբը ցանկանում է ջերմորեն դիմել շվեդ ժողովրդին, որ նա գործնականորեն տեղյակ պահի Հայ ժողովրդին, որ նա ունի Հյուսիսում բարեկամներ, որոնք մարդկային համերաշխությամբ ցանկանում են նրանց կողքին լինել»<sup>71</sup>: Շատ շվեդներ արձագանքել են կոչին. մարտի 9-ից նոյեմբերի 21-ը շվեդական Հանձնախումբը հավաքել է 11,294 շվեդական քրոն<sup>72</sup>: Այս օգնությունը փոխանցվել է Հայաստանի սովյալների օգնության դերմանական Հանձնախմբին: «Հայաստանի շվեդական Հանձնախումբը» 1921-ին նաև հրատարակել է շվեդ և դերմանացի հեղինակների պամֆլետներ և բուկլետներ Հայոց ցեղասպանության վերաբերյալ<sup>73</sup>:

Մոտ մեկ տասնամյակ Հայաստանը եղել է շվեդ ականավոր Հասարակական գործիչ, աստվածաբան, Դյուրսհոլմի համալսարանի ուսուցչապետ Փրեդերիք Նաթանայել Բեսքովի (1865–1953) ուշադրության կենտրոնում<sup>74</sup>: 1920-ից մինչև 1930-ականները նա 15-ից ավելի հոգևած է դրել Հայաստանի և Հայ ժողովրդի մասին շվեդական մամուլում (մասնավորապես իր և այլոց խմբագրած «Քրիսթեթ սամհելսլիվ»-ում): 1924 թ. Բեսքովը Հայ որբերին օգնելու նպատակով հատուկ Հանձնախումբ է հիմնել: Նույն թվականի մարտի 19-ին Ստոկհոլմում կազմակերպվել է Հայ ժողովրդին նվիրված երեկո՝ պրոֆեսորներ Յոհան Ռոսվալի, Վ. Հադելվելդի և այլոց մասնակցությամբ: Ռոսվալը բանախոսել է Հայ ճարտարապետության մասին և ցուցադրել հայկական հուշարձանների լուսապատկերներ: Հադելվելդը ներկայացրել է Հայ ժողովրդական երգերի մի շարք նմուշներ, որ ինքը եվրոպական նոտագրությամբ դրի է առել Թիֆլիսում: Իր գեկուցման մեջ պրոֆեսոր Բեսքովը ներկայացրել է Հայ ժողովրդի պատմությունը, նշելով, որ նա, հակառակ դարավոր ստրկությանը և կոտորածներին, մինչև օրս պահել է իր յուրահատուկ ցեղային դժբերը և քրիստոնեական կրոնը՝ մնալով եվրոպական մշակույթի առաջապահ Արևելքում: Այդ պատճառով, նշել է նա, եվրոպացիների պարտականությունն է ապահովել այդ ժողովրդի ֆիզիկական և բարոյական դոյուլյու-

71 Radda Armenien! "Meddelanden ..." 1921, Stockholm, № 2-3, s. 10.

72 Նվիրատուների ցանկը տե՛ս "Meddelanden ..." 1921, № 7-9, s. 23.

73 J o h. L e p s i u s. Ett kristet folks undergång; N. B e s k o w. Ett martyrfolk i det tjugunde århundradet; Hur det gick till vid armeniernas deportation; M. N i e p a g a. Vad en tysk lektor i asiatiska Turkiet upplevde år 1915 (Stockholm, 1921). Այս գրքույկները լույս են տեսել Հայերեն, ժանեստ Հակոբյանի թարգմանությամբ (տե՛ս «Հյուսիսսովյալ» տարեգիրք, նշված հատորը, էջ 191-238):

74 Ուփսալայի համալսարանի գրադարանում պահվող Նաթանայել Բեսքովի արխիվում մենք հայտնաբերել ենք Հայ գաղթականության հարցերին առնչվող վեց նամակ և թարգմանաբար հրատարակել Հայերեն (տե՛ս Ա. Բ ա խ չ ի ն յ ա ն. Նաթանայել Բեսքովի նամակները Հայ գաղթականության վերաբերյալ. - «Հայկադրան Հայագիտական Հանգես», Հ. ԺԹ, Բեյրութ, 1999, էջ 393-405):



նր: Հանձնախումբը նպատակ է գրել հիմնել հայ որբերի գաղութ, որտեղ նրանք կարողանան ապրել և զարգանալ որպես մարդ և հայ<sup>75</sup>: Եվ իսկապես, Սիրիայում 1920-ական թվականներին նախանայել Բեսքովի հետևողական ջանքերի շնորհիվ հիմնվել են Թել Արմեն (Թել ալ-Արման) և Թել Սամեն գաղթականները, որտեղ հավաքվել են եղեռնից որբացած բազմաթիվ հայ մանուկներ և այրիներ<sup>76</sup>: 1926 թ. Բեսքովն անձամբ այցելել է այդ գաղթականներ, որտեղ օգտաշատ աշխատանք էր կատարում իր համախոհ Քարեն Եփեհեն: Այդ այցելությունից հետո Բեսքովը գրել է «Պաղեստինում և Սիրիայում» և «Մի շվեդական հողագործական գաղութ հայ գաղթականների համար» գրքուկները<sup>77</sup>: Տարիներ անց նա շվեդ ընթերցողին ներկայացրել է ևս մի գրքուկ հայ գաղթականների մասին<sup>78</sup>: Հայ գաղթականների կյանքն արտացոլվել է նաև Ք. Ֆրիսի և Ա. Բաքմանի շվեդերեն հրատարակված գրքուկներում, որոնք եղել են «Շվեդ կանանց քարոզչական ընկերություն» վերջին հրատարակությունները<sup>79</sup>:

Օժանդակությունը Թել Արմենին դադարեցվել է 1930-ականների սկզբին: Շվեդ քաղաքական և հասարակական գործիչները, որ ակտիվ էին 1917-ին, հետ են կանգնել հայկական գործերից: Ըստ էության, գա նրանց համար պատահական, ժամանակավոր զբաղմունք է եղել, չնայած ոմանք (Լինգհագեն, Բեսքով) շարունակել են պասիվ կերպով հետաքրքրվել Հայաստանով: Եվ թեև երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրերին Հայաստանը դարձյալ գրեթե անծանոթ երկիր էր Սկանդինավիայի համար, չի կարելի թերադնահատել Հայաստանի նպաստ դանիական և շվեդական հանձնախմբերի դործունեությունը, որոնք սկանդինավյան հանրությունը մոտ չորս տասնամյակ շարունակ իրազեկ են պահել Հայկական հարցի վերաբերյալ:

## АРМЯНОФИЛЬСКОЕ ДВИЖЕНИЕ В СКАНДИНАВСКИХ СТРАНАХ

(1896-1930-е годы)

АРЦВИ БАХЧИНЯН

### Резюме

В сообщении собраны факты, касающиеся участия скандинавских стран и отдельных личностей в движении за интересы армянского народа. Армянофильское движение, имевшее место в Швеции, Дании и Норвегии в годы после армянской резни в Османской империи в 1894-1896, в годы первой мировой

75 "Stockholms-Tidningen". – 14.II.1924, նաև՝ «Հայրենիք», Բոսթոն, 15.V.1924:

76 Այդ գաղթականների մասին տե՛ս «Ապագա», Փարիզ, 26.X.1929:

77 N. B e s k o w. I Palestina och Syrien. Stockholm. 1926; En svensk jordbrukskoloni för armeniska flyktingar. Stockholm, 1927.

78 N. B e s k o w. Armeniska flyktingar av idag. Stockholm, 1936.

79 K. F r i e s. Bland spillromma av ett folk. Ansgarius, 1926; A. B a c k m a n. Från de armeniska flyktingren. Skildring av ett besök i Grekland. Stockholm, 1928.

войны и после нее проявились в а) деятельности шведских и датских общественных организаций, которые послали миссионеров-женщин для работы среди армянских вдов и сирот в разных городах Османской империи, а затем — в армянских колониях Сирии, Ливана и Греции (датчанки Карен Еппе, Мария Якобсен, шведка Альма Юхансон, норвежка Бодиль Бйорн, и др.); б) в публикации на скандинавских языках статей и книг об армянском вопросе, свидетельства очевидцев; в) в активной проармянской пропаганде отдельных общественных деятелей, таких как Фритъоф Нансен (Норвегия) и Натанаел Бесков (Швеция). Шведские активисты пытались влиять на государство, чтобы то взяло на себя мандат Армении. Не достигнув успеха, они спасали армянских детей и женщин из мусульманского плена, основали в Сирии колонии для беженцев.